5500

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 130 - 25

Նախաձեռնող՝ ***«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ***
ք. Երևան Շարա Տալյան 7

Գործունեությունը՝ ***«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի անտառապատման աշխատանքներ***
Սյունիքի մարզ

Առդիր՝ 9 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 130 - 25

«19» Մայիսի **2025թ.**

«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Մեղրի համայնք

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ՝ անտառապատման աշխատանքները իրականացվելու են Սյունիքի մարզի, Մեղրի համայնքի, «Արևիք» ազգային պարկի Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի «բ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Անտառապատման իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանալու մասին» N 1045-Ն որոշումը, համաձայն որի պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական ու պայթեցման աշխատանքների, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ հաղորդակցուղիների անցկացման, հորատման և այլ աշխատանքների իրականացման ժամանակ անտառօգտագործողը պարտավորվում է օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով իրականացնել անտառապատման աշխատանքներ:

Անտառապատման նպատակն է «Իրան-Հայաստան 400կվ 3-րդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի» կառուցման շրջանակներում, անտառային ծածկույթի հատման, անտառային տնտեսությանը հասցված վնասի հատուցում կատարել: Այդ նպատակով ընտրվել է «Արևիք» ազգային պարկի տարածքում անտառապատման աշխատանքների իրականացումը: Աշխատանքների ընթացքում վնաս է հասվցվել «Արևիք» ազգային պարկի 4,2հա անտառածածկ տարածքին: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հետ քննարկման արդյունքում առաջարկվել է Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տեղանքում կատարել անտառվերականգնման աշխատանքեր :

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը ներառում է Մեղրի խոշորացված համայնքի՝ Վարդանիձոր, Թխկուտ և Այգեձոր գյուղերը: Անտառապատման համար ընտրված ընդհանուր տարածքը կազմում է 10.2 հա, որից անտառապատման ենթակա տարածքը կազմում է 8.4 հա: Ընդհանուր տարածքը բաղկացած է երկու առանձին հողակտորներից, որոնց միջև հեռավորությունը կազմում է 350մ: Ելնելով հողակտորներից մեկով անցնող ռազմավարական և հակահրդեհային նշանակության ճանապարհի անխափան անցանելիությունն ապահովելու անհրաժեշտությունից, որտեղ անտառապատման աշխատանքների ընդհանուր մակերեսը կազմելու է 8,4 հա, տարածքը պայմանականորեն բաժանվել է չորս առանձին հողակտորների և համարակալվել՝

- հողակտոր 1-ի մակերեսը կազմում է 5հա,
- հողակտոր 2՝ 1,7հա,
- հողակտոր 3՝ 0.8հա,
- հողակտոր 4՝ 0.9հա

Անտառապատման համար ընտրված տարածքն իրենից ներկայացնում է նոսրուտ: Այն գտնվում է ծովի մակերևույթից 1700մ միջին բարձրության վրա:

Անտառապատման տարածքի հողերի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնապահպանական: Հողերը ներառում են ջրովի վարելահող ՝ 1.43հա, պտղատու այգի 1.8հա , անտառ՝ 5,17 հա:

Սյունիքի տարածաշրջանում ծովի մակերևույթից 2000 մ-ից ավելի բարձրությունների վրա տարածված են լեռնային սևահողային, լեռնամարգագետնային, լեռնաանտառային մասերը, հողերն ունեն միջակ կավավազային և ծանր կավային մեխանիկական կազմ, միջին խտությունը տատանվում է 1,16-1,24 գ/սմ^3, հողի ծակոտկենությունը՝ 52,4-55,2 %:

Որոշ բարձրադիր հատվածներում, որտեղ առկա են անտառային հատվածներ՝ ձևավորվել են անտառային դարչնագույն կրազերծված կավայնացված հողերը, իսկ անտառազուրկ հատվածները՝ տափաստանացված են:

Տարածաշրջանի բուսականությունն ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ, մեզո-քսերոֆիլ և մեզոֆիլ բնույթ, ֆլորան հիմնականում ծառաթփային և տարախոտային է: Բուսական աշխարհը ՀՀ մյուս ֆլորիստիկ շրջանների համեմատ բազմազան է՝շուրջ 2000 -2500 բուսատեսակ՝ անոթավոր բույսեր՝ որոնք ներկայացված են մի շարք հազվագյուտ, անհետացող և էնդեմիկ բուսատեսակներով, մշակաբույսերի վայրի ցեղակիցներով, այլ

օգտակար բույսերով՝ սննդային, դեղաբույսեր:
«Արևիք» Ազգային պարկն ունի նաև հարուստ կենդանական աշխարհ: Այստեղ հանդիպում են առաջավոր ասիական ընձառյուծը, բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, միջերկրածովային կրիան, հայկական իժը, կովկասյան ջրասամույրը, կասպիական հնդկահավը, կովկասյան մայրեհավը և այլն:
Անտառապատման աշխատանքներն իրականացվում են այն հողատարածքներում, որտեղ նախկինում ծառեր չեն եղել: Ծառատնկումը կատարվելու է այն բուսական կազմով, որը մոտ կլինի բնական անտառներին, ելնելով տեղանքի հողակլիմայական պայմաններից:
Ծառատեսակներն ընտրվել են կենսոլորտի անտառագետի հետ համատեղ քննարկումների արդյունքում՝ տեղանքին բնորոշ պտղատու ծառատեսակներից:
Լանջի միջին թեքությունը կազմում է 15°, լանջերի հիմնական կողմնադրությունը՝ արևելյան և հարավ-արևելյան:
Անտառապատման աշխատանքների իրականացման համար որպես գլխավոր ծառատեսակներ նախատեսվում են օգտագործել Խնձորենի արևելյանն ու Տանձենի կովկասյան Տերևաթափը,որպես ուղեկցող սալորենու (Prunus), բալենու (Cerasus), կեռասենու (prunus avium), տխլենու (Corylus) տնկիներ:
Տխլենի սովորական՝ Կեչազգիների ընտանիքի տերևաթափ թուփ է 2-5 մ բարձրությամբ, տերևները 7-12 սմ երկարությամբ, ունի հակաէրոզիոն մեծ նշանակություն, պտուղները օգտագործվում են սննդի մեջ: Սալորենի սովորական՝ Վարդազգիների ընտանիքին պատկանող տերևաթափ փոքր ծառ է՝ 4-10 մ բարձրությամբ և 15-25 սմ բնի տրամագծով, տերևները էլիպսաձև են, երկարավուն ձվաձև, 4-5-10 սմ երկարությամբ և 2-6 սմ լայնությամբ: Պտուղները գնդաձև են, կամ էլիպսաձև, 0,8-2 սմ տրամագծով: Խնձորենի արևելյան վարդազգիների ընտանիքին պատկանող պտղատու, տերևաթափ ծառ է ցեղ, 10-11 մ բարձրությամբ, 40-60 սմ բնի տրամագծով, տերևները էլիպսաձև: Պտուղները 2-4 սմ տրամագծով: Կեռասենի վարդազգիների ընտանիքի, կեռասենու ցեղի պտղատու բույս: Բարձրությունը հասնում է մինչև 10 մետրի, բնի հաստությունը 50-60 սմ: Տերևները ձվաձև: Պտուղները մինչև 2 սմ տրամագծով: Բալենի մանրապտուղ Վարդազգիների ընտանիքին պատկանող մինչև 1.5-2 մ բարձրությամբ թուփ է: Տանձենի կովկասյան՝ տերևաթափ խոշոր ծառեր են՝ 20-25 մ բարձրությամբ և 60-80 սմ բնի տրամագծով: Տերևները կլորավուն են կամ լայն ձվաձև, երբեմն մի փոքր երկարավուն, հազվադեպ՝ շեղանկյուն, 3-4 սմ:
Անտառվերականգնում պտղատու ծառատեսակներով նպատակ ունի ապահովել էկոլոգիական կայունություն՝ ստանձնելով ոչ միայն բուսական ծածկույթի վերականգնում, այլև շրջակա միջավայրի բարելավումը: Այս նախագիծը չի ենթադրում այգի հիմնել, այլ անտառվերականգնում է՝ պտղատու տեսակներով, որոնք կլանում են ածխաջրածիններ, բարելավում ջրային ռեսուրսների մատակարարումը և ստեղծում կենսաբազմազանություն, հաշվի առնելով նաև այն հիմնական գործոնը, որ տեղանքը բնորոշ է այս տեսակներով:
Նախատեսվում է 1 հեկտար տարածքում տեղավորել 3000 ծառ: Սա հնարավոր է իրականացնել 1.7մ միջբուսային հեռավորությամբ և 2մ միջշարային հեռավորությամբ, ինչը կապահովի ընտրված յուրաքանչյուր տեսակի համար անհրաժեշտ տարածք՝ ծառերի բնական աճի և արմատավորման համար:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * RA YEREVAN

Ընտրված պտղատու տեսակները՝ խնձորենի, տանձենի, բալենի, սալորենի, կեռասենի և տխլենի, ունեն տարբեր բնական պահանջներ, որոնք հաշվի առնելով՝ նրանք օպտիմալ համակցվում են նույն տարածքում:

Խնձորենի և տանձենի

Այս տեսակները պահանջում են բավարար տարածք իրենց ուժեղ արմատային համակարգի և աճի համար: Դրանք պետք է ունենան լավ լուսավորում և օդափոխություն: 1.7 մ միջբուսային հեռավորություն և 2 մ միջշարային հեռավորություն լիովին բավարար են նրանց աճի համար:

Բալենի և սալորենի

Այս ծառերը նույնպես սիրում են արևի լույս և լավ օդափոխություն: Նրանց արմատային համակարգը համեմատաբար մակերեսային է, սակայն, որպեսզի հասնեն իրենց առավելագույն աճի մակարդակին, պետք է ունենան համապատասխան տարածք:

Կեռասենի և տխլենի

Այս ծառերը ունեն ավելի մեծ արմատային համակարգ՝ պահանջելով ավելի շատ տարածք: Դրանք համատեղելի են նույն տարածքում՝ ունենալով համանման պահանջներ արևի լույսի և օդափոխության նկատմամբ:

Անտառվերականգնման սխեման հիմնված է տարբեր տեսակների ճիշտ համատեղման վրա:Պտղատու ծառերը բազմազանություն են ստեղծում՝ հանդիսանալով սննդի աղբյուրներ ինչպես կենդանիների, այնպես էլ տեղական բնակչության համար:

Քանի որ տարածքը բաժանված է առանձին 4 հողակտորների, որոնցից երկուսը՝ հողակտոր N3՝ 0.8հա, հողակտոր N4՝ 0.9հա իրենցից ներկայացնում են նոսրուտ (մինչև 0.3 լրիվությամբ), ապա տնկումը նշված հողակտորներում նախատեսվում է կատարել խառը սխեմայով փոսային եղանակով ՝ 1 հա – հաշվով օգտագործելով 3000 հատ տնկի՝ առանց մաքրման աշխատանքներ իրականացնելու՝ պահպանելով առկա ծառաթփային բուսականությունը, իսկ Հողակտոր N 1-ում՝ 5հա, հողակտոր N 2՝ 1,7հա, իրականացնել կանոնավոր սխեմայով՝ խրամատավորմամբ, 1 հա-ի հաշվով օգտագործելով 3000 հատ տնկի, որից՝ խնձորենին 800հատ, տանձենին 800հատ, սալորենին 400հատ, բալենին 400հատ, կեռասենին 400 հատ և տխլենին 200հատ:

Այսպիսով, անտառապատման համար կպահանջվի ընդամենը 25200 հատ տնկանյութ, որից՝ խնձորենի արևելյան 6720, տանձենի կովկասյան 6720, սալորենի սովորական 3360, բալենի մանրապտուղ 3360, կեռասենի սովորական 3360, տխլենի սովորական 1680: Տնկանյութերի առնվազն 10%-ը պարտադիր լինելու է վայրի տեսակներից:

Անտառապատման համար ընտրված տարածքում ընդհանուր աշխատանքերի սահմանը կազմում է 10.2 հա, որից անտառապատման ենթակա տարածքը, որը զուրկ է ծառաթփային բուսականությունից կազմում է 8.4 հա:

Հիմնադրման հաջորդ տարում նախատեսվում է իրականացնել Լրացման աշխատանքները: Դրանք կատարվելու են տնկումից հետո տնկարկների գույքագրման արդյունքների հիման վրա, եթե տնկիների կպչողականությունը բավարար չլինի: Անտառմշակույթների լրացման համար կպահանջվի 1-2մ բարձրության 6300 հատ տնկանյութ, որից՝ խնձորենի՝ 1680հատ, տանձենի՝ 1680հատ, սալորենի՝ 840հատ,

02543163 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

բալենի՝ 840հատ, կեռասենի՝ 840հատ, տխլենի՝ 420հատ :

Անտառնյութերի հիմնման համար կատարվելու են տարածքի տեղանշումներ, տնկումը կատարվելու է խրամատային եղանակով, փոսերի փորում ձեռքով, խրամատների պատրաստում պլանտաժային գութանով: Խրամատների պատրաստումը նախատեսվում է գութանով՝ գութանի մեկ երկթևանի խուփով, քանի որն այն ավելի արագ և քիչ ծախսատար մեթոդ է:

Կատարվելու է ագրոտեխնիկական խնամք տարեկան 3-4 անգամ, միջշարքերի մեքենայացված խոտհունձ, դաշտամկների դեմ պայքարի աշխատանքներ: Հիմնադրման հաջորդող 7 տարիների ընթացքում մինչև անտառմշակույթների անտառի շարք փոխադրելը նույնպես նախատեսվում է իրականացնել ագրոտեխնիկական խնամքի և խոտհունձի աշխատանքներ: Չորացած ճյուղերի, բնաշիվերի հատումը կատարվելու է ձեռքով, ելնելով տարածքի սանիտարահիգենիկ պայմանների պահպանումից:

Անտառմշակույթների հիմնում, պահպանում, խնամք.

Անտառմշակույթների հիմնումը կատարվելու է առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշման պահանջներով:

Անտառմշակույթների բարձր կպչողականություն ապահովելու համար, նախատեսված է տնկման հետ զուգահեռ և վեգետացիոն ժամանակահատվածում կատարել անտառմշակույթների ոռոգման աշխատանքներ:

Անտառային տնտեսություն վարող կազմակերպության հետ քննարկման արդյունքում նախատեսվել է ընդհանուր թվով 6 ուղեփակոցների տեղադրում, որից երեքը մակերեսով ամենամեծ՝ արևելյան տեղադրության հողակտորում են լինելու: Նախատեսվում է կառուցել 4000մ երկարությամբ ցանկապատ, որի համար նախատեսվում է՝

- 1,8մ 1330 հատ հենասյունների պատրաստում
- ցանկապատի տարածքի տեղաձևում և փոսերի փորում հենասյուների տեղադրման համար(0,35*0,35մ 0,5մ)
- 25600գծմ փշալարի ձեռք բերում
- 22.4խմ ծավալի շինափայտի ձեռք բերում:

Ցանկապատի վրա տեղադրվելու է երկկփեղկանի փայտե դարպաս:

Չի նախատեսվում գործունեության ամբողջ տարածքի ցանկապատում, քանի որ այն կարող է խաթարել վայրի կենդանիների տեղաշարժին, միգրացիոն ուղիների և բնակմիջավայրի սահմանների խաթարմանը: Ցանկապատման ընթացքում պահպանվելու է հողակտորների միջև գրունտային ճանապարհների անցանելիությունը:

Խողովակաշար. տարածքի ոռոգումը կատարվելու է պոլիէթիլենային՝ նվազագույնը 100մմ տրամագիծով պոլիէթիլենային խողովակներով: Նախատեսվում է խողովակների եզրերին տեղադրել փականներ՝ ոռոգումն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Պայմանականորեն առանձնացված առաջին խողովակը, որի երկարությունը կազմում է մոտ 202 մ նախատեսված է N2 հողակտորը ոռոգելու համար, երկրորդ խողովակը՝ մոտ 925 մ

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

երկարության՝ N1,N3,N4 հողակտորների ոռոգումն ապահովելու համար: Երկրորդ խողովակի երկու միջնամասերում՝ N1,N3 նախատեսվում է տեղադրել եռաբաշխիչներ փականներով, ինչպես նաև ջրաչափեր հողակտորների ջրումն ապահովելու և ռացիոնալ կազմակերպելու, ջրի խնայողաբար օգտագործելու նպատակով: Խողովակաշարն անցկացվելու է վերգետնյա, ինքնահոս եղանակով:
Շահագործման փուլում անտառպատումը կնպաստի տարածքի ջրային և ջերմային բալանսի կարգավորմանը:
Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. անտառտնկման աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝

- պլանտաժային գութան, բահեր
- բեռնատար
- խոտհնձի մեքենաներ:

Շին տեխնիկան և սարքավորումները կարող են լինել Կապալառու կազմակերպությանը կամ վարձակալվել այլ կազմակերպություններից:
Գործունեության իրականացման համար օգտագործվելու է գոյություն ունեցող գրունտային ճանապարհը:
Հողային աշխատանքներ. ծառերի տնկման, հենարանների հիմքերի տեղադրման համար իրականացվելու են 120 մ³ ծավալի հողային աշխատանքներ:
Հողային զանգվածը պահվելու է տեղում՝ փորված փոսորակի եզրին և ծառերը տնկելուց կամ հենասյունները տեղադրելուց հետո, անմիջապես կատարվելու է հետլիցք: Հողի ավելցուկային քանակ չի առաջանալու:
Կատարվելու է թափոնների հեռացում, գոյություն ունեցող գրունտային ճանապարհի կարգաբերում, փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով :
Նախատեսվող գործունեության շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև ջրցանման նպատակով:
Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Տնկման աշխատանքների իրականացման ժամանակահատվածում կիրականացվի ջրցանում՝ տնկիների կպչողունակության ապահովման, ինչպես նաև հողային աշխատանքների ժամանակ փոշու քանակների նվազեցման նպատակով: Ջրցանումը կիրականացվի տաք եղանակին: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր:
Տնկման փուլից սկսած՝ տնկիների ոռոգման նպատակով կօգտագործվի Բողաքար գետի ջուրը, որը մատակարարավելու խողովակներով՝ համապատասխան Ջրօգտագործման թույլտվության ստացումից հետո:
Ըստ ուսումնասիրությունների՝ տարածքում նախատեսված անտառմշակույթների բարձր կպչողունակությունն ապահովելու համար 1հա-ի հաշվով կպահանջվի 3800մ³ ջուր:
Ընդհանուր առմամբ 8,4 հա ընտրված տարածքում 229 օր վեգետացիայի տևողությամբ ոռոգման համար կպահանջվի մոտ 32000մ³ ջուր:
Գործունեության իրականացման համար նախատեսված նյութերը մատակարարվելու են

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:
Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ ցանկապատման շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործողությունը նպաստելու է բնական էկոհամակարգերի և շրջակա միջավայրի բարելավմանը, ինչպես նաև տեղային մակարդակով մեղմելու է կլիմայի գլոբալ փոփոխությունը: Նախատեսվող գործունեությունը բնապահպանական միջոցառում է, որը նպաստելու է կենսաբազմազանության պահպանությանը, կենդանիների բնակմիջավայրերի ընդլայնմանը, հողաշերտերի էրոզիայից և դեգրադացումից պաշտպանելուն, քամիների մեղմմանը, խոնավության և ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների նվազեցմանը և այլն:

Հաշվետվության շրջանակներում իրականացվել է գործունեության իրականացման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ: Օրենսդրությանը համապատասխան՝ հանրային երկրորդ լսումը իրականացվել է Մեղրի քաղաքի ղեկավարի նստավայրում: Փորձաքննական գործընթացում ներգրաված են եղել ոլորտի մասնագիտական կառույցները, որոնք հանդես են եկել հաշվետվության վերաբերյալ համապատասխան առաջարկներով և դիտողություններով:

Փորձաքննության ընթացքում կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալների ուսումնասիրություն՝ կենսաբազմազանության և էկոհամակարգերի վերաբերյալ գործող օրենսդրության, ներառյալ՝ վավերացված միջազգային կոնվենցիաներին ու պայմանագրերին համապատասխանության վերաբերյալ: Գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում:

Գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու՝

- օդային ավազան արտանետումների
- կենդանական և բուսական աշխարհի պահպանության
- հողային և ջրային ռեսուրսների օգտագործման
- թափոնների կառավարման
- արտակարգ իրավիճակների առաջացման
- մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Գործունության իրականացման ընթացքում կատարվելու են միայն հողային աշխատանքներ, որը ներառելու է փոսերի փորման, ոռոգման ջրի խողովակների անցկացման, տարածքի ցանկապատման աշխատանքները:

Օդային ավազան արտանետումների ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում՝ օդային ավազան ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի տեսքով:Գործունեությունն շահագործման փուլում օդային ավազանի վրա բացասական ազդեցություն չի ունենալու: Այն կունենա դրական միայն ազդեցություն, քանի

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER

որ ավելանալու է կանաչ զանգվածը՝ բարելավելով կլիման: Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է՝

- հողային և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել է ջրցան:
- հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է՝ 480 խմ և կենցաղային աղբը՝ 34.8 տ: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

Անտառմշակույթների պահպանման, կպչողականության ամրապնդման համար նախատեսվում է ոռոգման ցանցի կառուցում: Տարածքում նախկինում գործել է ջրամատակարարման ոռոգման համակարգ՝ ջրանցքի (կանալի) տեսքով, որի մնացորդները տեսանելի են տեղանքում:

Ստեղծվող տնկարկները կնպաստեն էկոլոգիական հաշվեկշռի կարգավորմանը, առողջարարական և ռեկրեացիոն հնարավորությունների բարձրացմանը, ինչպես նաև շրջակա համայնքների համար կհանդիսանան վայրի պտուղների մթերման և օգտագործման աղբյուր, նպաստելով համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Նախատեսված է իրականացնել մոնիթորինգ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմանն ուղղված:

նախատեսվում է իրականացնել՝

- Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն:
- Համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ աշխատանքային նորմերի պահպանման նպատակով:
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով:
- Կենդանիների բնադրավայրերի առկայության հաշվառում և վերահսկում:
- Աշխատանքերի իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն:
- Բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում:
- Տրանսպորտային միջոցների տեղաշարժի վերահսկում՝ ազգային պարկի տարածքներում:

Ընդհանուր անտառապատման աշխատանքների նախնական բյուջեն համաձայն նախագծի կազմելու է շուրջ 72,728,101 դրամ, /ներառյալ ԱԱՀ/, իսկ աշխատանքների կատարման տևողությունը նախատեսված է՝ 7 տարի:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Անտառտնկման աշխատանքների ժամանակ օգտագործել փակ արմատային համակարգով բարձրորակ տնկանյութ և ապահովել տնկարկների կպչողականությունը 60 % -ից ոչ պակաս:
- Վնասատուների, կրծողների, բույսերի սնկային հիվանդությունների դեմ պայքարում օգտագործել պայքարի բացառապես կենսաբանական մեթոդներ առաջնորդվելով՝ ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի Գլուխ 4-ի պահանջներով:
- Գործունեության տարածքում աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշման պահանջներով՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանությունն ապահովելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված պարտադիր կատարման ենթակա պահանջների իրականացման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան